

ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՀՈՐԻԶՈՆ

ՅԱԽԵԼՈՒԱԾ «ՀՈՐԻԶՈՆ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ

Նոյեմբեր 2023

ՄԵՐ ԽՕՍՔԸ



Նոյեմբեր ամսուան մէջ ամբողջ աշխարհը կը նշէ Մանուկներու Միջազգային Օրը: 1924 թուականին Ժընեւի մէջ վաւերացուեցաւ յայտարարութիւն մը, որ տարբեր կէտերով կը պաշտպանէ մանուկներու իրաւունքները:

Երբ աշխարհը կը նշէ այս օրը, անկարելի է, որ մենք մոռնանք Արցախի անմեղ մանուկներու հոգեկան տառապանքը եւ անոնց առօրեայ դժուարութիւնները:

Մանուկներու Միջազգային Օրուան առթիւ, փորձենք ամէն ձեւով օգտակար դառնալ բոլոր այն մանուկներուն, որոնք զրկուած են կեանքի բնական բարիքներէն, ինչպիսին է պարագան Արցախէն բռնի տեղահանուածներուն:

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐ


Մանուկներու իրաւունքները պաշտպանող 1924 թուականին Ժընեւի յայտարարութեան մէջ նշուած է չչահագործել մանուկը: Իրաքանչիւր մանուկ առողջութեան, պաշտպանութեան եւ կրթութեան, այսինքն դպրոց յաճախելու իրաւունք ունի:

Հակառակ ուղղուած բոլոր կոչերուն, որ աշխարհի տարածքին պետութիւններ յարգելու եւ գործադրելու են մանուկներու իրաւունքները պաշտպանող հոչակագիրը, տակաւին կան երկիրներ, որոնք կ'արհամարհեն այդ բոլորը: Այսպէս, օրինակ, Ափրիկէի եւ Միջին-Արեւելքի մէջ, մեծ է թիւը այն մանուկներուն, որոնք նախակրթարանէն ետք, դպրոց չեն յաճախեր:

Մանուկներու Միջազգային Օրուան նշումի նպատակն է աշխարհի բոլոր մանուկներուն միջեւ ստեղծել եղբայրութեան կամուրջ մը, զիրար անելի լաւ հասկնալու: Նաեւ միջազգային այս օրը նշելով առիթ մը կը ստեղծուի յիշեցնելու աշխարհին, թէ պէտք է յարգուին մանուկներուն զգացումներն ու իրաւունքները, որովհետեւ երեխան ժողովուրդներու կորիզն է եւ ապագայի յոյսը:



ԱՐԱՄ ԽԱՀԱՏՈՒՐԵԱՆ



Արամ Խաչատուրեանի ծննդեան 120-ամեակն է: Ան ծնած է 1903 թուականին, Թիֆլիս, երաժշտութեամբ ու արուեստով զբաղող ընտանիքի մը մէջ:

Արամ Խաչատուրեան քսաներորդ դարու այն նշանաւոր հայ երաժշտահանն է (compositeur), որ ճանչցուած է որպէս համաշխարհային դասական երաժշտական մեծ դէմք: Անոր գործերը մինչեւ այսօր կը ներկայացուին աշխարհի ամէնէն մեծ բեմերու վրայ:

Արամ Խաչատուրեան ուսուցիչ էր, մանկավարժ ու պարուսոյց: Ան երաժշտագէտ էր, դաշնակահար, ջութակահար եւ թաւջութակահար: Ան համալսարանի դասախօս էր եւ երաժշտական յայտնի ղեկավար (maestro):

Ան 24 տարեկան էր, երբ ստեղծագործեց իր առաջին երկու գործերը՝ «Պար» եւ «Պոեմ»: Խաչատուրեան գրած է նաեւ երգեր եւ եկեղեցական երաժշտութիւն, ինչպէս նաեւ երաժշտութիւն ֆիլմերու համար: Մեր բոլորին շատ ծանօթ «Սուրերու պարը» իր յօրինած «Գայիանէ» թատերապարի ստեղծագործութիւններէն մէկն է:

Արամ Խաչատուրեանը արժանացած է շարք մը շքանշաններու եւ պարգեւներու: Այս մեծանուն երգահանին անունով կոչուած են Հայաստանի լաւագոյն երաժշտական դպրոցները եւ քաղաքներու կեդրոնական փողոցները:



ԱՆՄԱՀ ՀԵՐՈՍ՝ ՅԱԿՈՐ ԱՍԹԱՐԾԵԱՆ

Արցախեան 44-օրեայ պատերազմի նահատակ հերոս Յակոբ Ասթարճեան ծնած է 26 Ապրիլ 1991-ին, Հալէպ: Աւարտելէ ետք Ազգ Սահակեան վարժարանը, Յակոբ յաճախած է Քարէն Եփփէ Ազգ. Ճեմարանը: Փոքր տարիքէն անդամակցած է ՀՄԸՄ-ին եւ Սուրիոյ Պատանեկան Միութեան: Աւելի ուշ, ան անցած է Հայ Յեղափոխական Դաշնակցութեան շարքերը:

Յակոբ մարդկային յատկանիշներով օժտուած տիպար անձ մը եղած է, պարտականութեան գիտակից եւ իրեն վստահուած աշխատանքը ամբողջութեամբ կատարող: Ան համակարգչային գործերով եւ նկարչութեամբ զբաղած է, բայց իր սրտին մէջ մեծ տեղ գրաւած է հայրենիքը, հայ ժողովուրդն ու հայկական ակումբը:

Սուրիոյ դաժան պատերազմին ընթացքին, Յակոբ իր ամբողջ ժամանակը տրամադրած է Հալէպի հայաշատ թաղամասերու պաշտպանութեան, ամէն ձեւով օգտակար ըլլալու համար իր ազգին: Իսկ երբ սկսաւ Արցախի 44-օրեայ պատերազմը, Յակոբ իր ուխտին եւ սկզբունքներուն հաւատարիմ, ուղղուեցաւ Շուշի միանալու Մոսիկ Սեքլեմեանին եւ հրամանատար Յարութ Բանոյեանին:

5 Նոյեմբեր 2020-ին, Յակոբ Ասթարճեան, իր ընկերներուն հետ նահատակուեցաւ Շուշիի ինքնապաշտպանութեան ժամանակ, միանալով անմահ հերոսներուն՝ Եռաբլուր պանթէոնին մէջ: Յաւերժ փառք արցախեան կռիւներուն ժամանակ նահատակուած բոլոր հերոսներուն:

ԵՌԱԲԼՈՒՐ

Խօսք՝ Սարգիս Կիրակոսեանի, Երաժշտութիւն՝ Զարեհ Քէշիշեանի

Երեք արծիւ թռաւ յանկարծ
Ծիծեռնակաց երկինքն ի բաց,
Եւ բլուրներն երեք եղան
Ազատութեան լուսէ խորան:

Ղարաբաղի հողը հրաշ
Կակաշ-կակաշ այրեր ցնձաց.
Նոր հայդուկներ պերճ ու բարի
Ըմբոստացան ուխտեր արի:

Կրկներգ
Արեւ սիրոյ, արեւ կեանքի,
Յաղթանակի ու գալիքի,
Եւ լեռները բանակ-բանակ
Եղան խրոխտ գունդեր կրակ:

Սոսկաց վախկոտ, նենգ ազերին,
Թողած ետին զէն ու դիակ,
Եւ սարերուն վրայ հայոց
Փայլատակեց դրօշ ու բոց:

Իմ ուխտավայր Եռաբլուր,
Հիմա աճիւն, լաւայ ես լուռ,
Սակայն ընդմիշտ պիտի պողոթկաս
Դաւերուն դէմ մարտեր, երազ...

Իբրեւ ուխտը մեր սուրբ հողին՝
Պիտի տեղաս շանթեր կրկին,
Եւ արեւ ես հուր, յալիտեան
Հրաշք երկիր իմ Հայաստան:

Առաջին անգամ 2014-ին, մեր բոլորին ծանօթ ազգային-հայրենասիրական երգիչ Գառնիկ Սարգիսեան կատարեց այս երգը, յարգելով յիշատակը մեր բոլոր նահատակներուն, որոնք կը ննջեն Եռաբլուրի մէջ:

«ՄԱՄԻԿ ԵՒ ՊԱՊԻԿ»

«Մենք ենք Մեր Սարերը» (նաեւ ծանօթ որպէս «Մամիկ եւ Պապիկ») կամ «Տատիկ-Պապիկ») յուշարձանի քանդակագործն է Սարգիս Պաղտասարեան: Ան ծնած է Արցախի Հաղորութ շրջանի Բանաձոր գիւղը: Իր ստեղծագործութիւններէն են նաեւ Կոմիտասի, Աւետիք Իսահակեանի, Յակոբ Պարոնեանի, Դաւիթ Բեկի եւ այլ մեծ դէմքերու յուշարձանները Հայաստանի մէջ:




Արուեստագէտ Պաղտասարեան առաջին անգամ 1964-ին ներկայացուցած է «Մամիկ եւ Պապիկ» ի կաւէ քանդակը Իտալիոյ Քարարա քաղաքին մէջ տեղի ունեցած միջազգային մրցոյթին: Աւանդական տարազներով, արցախցի մամիկի ու պապիկի ուս-ուսի հպարտ կանգնած այս գեղեցիկ ու տպաւորիչ քանդակը գրաւած է բոլորին ուշադրութիւնը:

Երեք տարի ետք, 1967 Նոյեմբեր 1-ին Ստեփանակերտի բլուրներէն մէկուն վրայ կը կանգնի «Մենք ենք Մեր Սարերը» նշանաւոր յուշարձանը: Կարմիր տուֆով շինուած եւ 9 մեթր բարձրութիւն ունեցող այս արձանի ճարտարապետն է Եւրի Յակոբեան:

Քանդակագործ Սարգիս Պաղտասարեան անդրադառնալով իր այս ստեղծագործութեան ըսած է. «Արցախցի մը միայն գլուխն է այս հողի վրայ, անոր մարմինը, անոր արմատները շատ խորն են, այս լեռներուն մէջն են: Բնաւ կարելի չէ զայն արմատախիլ ընել եւ հողէն դուրս հանել»:

«Մենք ենք Մեր Սարերը» կամ «Մամիկ եւ Պապիկ» յուշարձանը խորհրդանիշն է ընտանեկան արժէքներու եւ կեանքի պահպանման նկատմամբ արցախցիներու զօրաւոր կամքին: Ան խորհրդանիշ է նաեւ Արցախի հողին եւ հայ ժողովուրդի արմատներուն միջեւ ստեղծուած ամուր կապին:



ԿԵՆՍԱՆԻԹԵՐ



Կան 13 տարբեր տեսակի կենսանիւթեր (vitamin), որոնցմէ իւրաքանչիւրը կարելի է մեր մարմինը: Այսօր պիտի անդրադառնանք կենսանիւթ Ա-ին, Աէ-ին եւ Տ-ին մասին:

Մենդարար ուտելիքները, ինչպէս՝ պտուղներն ու բանջարեղէնները, հարուստ են զանազան կենսանիւթերով:

Կենսանիւթ Ա-ն (A) կը նպաստէ մորթի, մազերու, եղունգներու եւ ոսկորներու առողջութեան: Ան նաեւ կը զօրացնէ մեր գիշերային տեսողութիւնը: Առողջ մորթ մը ունենալու համար, պէտք է ուտել Կենսանիւթ Ա-ով հարուստ ուտելիքներ, ինչպէս՝ ստեպոկինը, սեխը, շոմինը (սպանախը) եւ դեղին գոյնի մրգեղէնները:

Կենսանիւթ Աէ-ն (C), որ կը գտնուի նարինջի, լիմոնի, կաղամբի եւ այլ պտուղներու մէջ, կը զօրացնէ մեր մարմնի դիմադրողականութիւնը, այսինքն կը զօրացնէ մեզ, տալով մեզի ուժ դէմ դնելու հիանդութիւններուն:



Մեր մարմինը կը ստանայ կենսանիւթ Տէ-ն (D) արեւի ճառագայթներէն: Ան կը զօրացնէ մեր ոսկորները: Այս կենսանիւթը կը գտնուի նաեւ ձուկին, հալկիթի դեղնուցին եւ այլ ուտելիքներու մէջ:

Մնունդի մասնագէտներ կ'ըսեն, թէ առողջ մարմին մը ունենալու համար պէտք է մեր ամանները միշտ լեցուն ըլլան գոյնզգոյն եւ համեղ պտուղներով ու կանաչեղէններով:

ՀԱՆԵԼՈՒԿ

Ինչն է Օսանի առաջինը
Սօսիին մէջտեղինը
Օրիորդը ունի
Տիկինը չունի

ԿՐՆԱ՛Ս ԳՏՆԵԼ 2 ՊԱՏԿԵՐՆԵՐՈՒՆ ՄԻՋԵՒ ԳՈՅՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՑՈՂ 10 ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ:



ԹՈՒԹԱՆԿԱՄՈՆ ՓԱՐԱԻՈՆԸ

Եգիպտացիներ կը հաւատային, թէ մահէն ետք մարդիկ կ'ապրին: Ճիշդ այդ պատճառով անոնք բուրգեր շինելով (իրենց մտքով) փարաւոնին համար տուն շինած կ'ըլլային: Աւելին, անոնք բուրգերուն մէջ, փարաւոնին հետ կը թաղէին գանձեր եւ այլ թանկագին իրեր:

Հսկայական բուրգերը միշտ ալ զարմանք կը պատճառեն մեզի, որովհետեւ տակաւին մինչեւ հիմա յայտնի չէ, թէ Քրիստոսէ առաջ 18-րդ դարուն շինուած այս բուրգերը ինչպէս շինուած են եւ ինչպէս դարերէ ի վեր կանգուն մնացած են:



ԵԳԻՊՏԱԿԱՆ ԲՈՒՐԳԵՐԸ

Եգիպտական բուրգերը աշխարհի հրաշալիքներէն են: Եգիպտացիները այս հսկայական քարէ շինութիւնները շինած են փարաւոններուն համար: Փարաւոնը Եգիպտոսի թագաւորն էր: Եգիպտոսի ժողովուրդը շատ կը յարգէր իր փարաւոնները եւ կը պաշտէր զանոնք որպէս աստուածներ:

ՄԵՂՐԱՏՈՒ ՄԵՂՈՒՆ

Մեղրատու կը նշանակէ մեղր տուող:

Մեղուները երկրի վրայ ամէնէն շատ տարածուած միջատներէն կը համարուին: Անոնք թէ՛ մեղր կը պատրաստեն, թէ՛ մոմ, թէ՛ ծաղիկէ ծաղիկ թռչելով՝ ծաղիկներն ու բոյսերը կը տարածեն իրենց հաւաքած նեկտարով ու ծաղկեփոշիով:



Մեղրատու մեղուները ընդհանրապէս կը բնակին անտառներու եւ պարտէզներու մէջ, ուր զանազան ծաղիկներ կը գտնուին: Աշխարհի տարածքին կան 20 հազարէ աւելի մեղուներու տեսակներ: Անոնք բոլորն ալ նոյն ձեւով կ'աշխատին. իրաքանչիւր փեթակ ունի՝

- Իր մայր մեղուն, որ թագուհին է եւ աւելի մեծ է մնացեալ մեղուներէն:
- Իր չաշխատող արու մեղուները, որոնք շատ քիչ են թիւով եւ խայթոց չունին:
- Եւ իր աշխատաւոր մեղուները, որոնք փեթակէն ներս թէ դուրս կը կատարեն բոլոր աշխատանքները: Անոնք կը մաքրեն փեթակը եւ կը կազմեն մեղրաբջիջները, որ մայր մեղուն անոնց մէջ դնէ ձու: Անոնք նաեւ կը պատրաստեն մոմ եւ այդ մոմով կը շինեն նոր բջիջներ: Աշխատաւոր մեղուները ծաղիկներուն նեկտարը հաւաքելէ զատ, կը կերակրեն թրթուրները եւ կը պահպանեն փեթակը:

Ո՛Վ Կ՛ՈՒԶԷ ԸԼԼԱԼ ԲԱԶՄԱԳԵՏ

Նոյեմբեր ամսուան հարցումներու պատասխաններուն ժամկետն է 8 Դեկտեմբեր 2023: Հետեւաբար սիրելիներ, արձանագրեցէք զանոնք թուղթի մը վրայ, նշելով ձեր անունն ու ձեր յաճախած դպրոցին անունը: Յետոյ ուղարկեցէք այդ թուղթը Հորիզոնի խմբագրատուն՝

3401 Oliver Asselin
Montreal, Canada
H4J 1L5

1. Ո՞ր թուականին ժընեւի մէջ, մանուկներու իրաւունքները պաշտպանող յայտարարութիւն մը վաւերացուեցաւ:

- Ա. 1989-ին
- Բ. 1976-ին
- Գ. 1924-ին

2. Ո՞վ է Արամ Խաչատուրեան:

- Ա. Հայ ազատամարտիկ մը
- Բ. Հայ նշանաւոր երաժշտահան մը
- Գ. Հայ քանդակագործ մը

3. Որո՞ւ ստեղծագործութիւնն է «Սուրբու պարը»:

- Ա. Արամ Խաչատուրեանի
- Բ. Աննօ Պապաճանեանի
- Գ. Տիգրան Մանսուրեանի

4. Ո՞վ է «Մենք ենք Մեր Սարերը» յուշարձանի քանդակագործը:

- Ա. Մկրտիչ Տարազճեան
- Բ. Սարգիս Պաղտասարեան
- Գ. Եւրի Յակոբեան

5. 1967-ին ո՞ր կը կանգնի «Մենք ենք Մեր Սարերը» նշանաւոր յուշարձանը:

- Ա. Մարտունիի մէջ
- Բ. Հադրութի մէջ
- Գ. Ստեփանակերտի բլուրներէն մէկուն վրայ

6. Մամիկ եւ Պապիկ» յուշարձանը խորհրդանիշն է ընտանեկան արժէքներու եւ կեանքի պահպանման նկատմամբ արցախցիներու զօրաւոր կամքին: Նաեւ Արցախի հողին եւ հայ ժողովուրդի արմատներուն միջեւ ստեղծուած ամուր կապին:

- Ա. Ճիշդ
- Բ. Սխալ

7. Քանիտեսակ կենսանիւթեր կան:

- Ա. 3 տեսակ
- Բ. 13 տեսակ
- Գ. 10 տեսակ

8. Ո՞ր կենսանիւթով հարուստ են ստեպղինը, սեխը, շոմինը (սպանախը) եւ դեղին գոյնի մրգեղէնները:

- Ա. Կենսանիւթ Ա-ով (A)
- Բ. Կենսանիւթ ՍԷ-ով (C)
- Գ. Կենսանիւթ Տ-ով (D)

9. Ո՞ր մեղուն նեկտար կը հաւաքէ ծաղիկներէն

- Ա. Թագուհին
- Բ. Աշխատաւոր մեղուն
- Գ. Արու մեղուն

10. Որո՞ւ համար եգիպտացիները բուրգեր շինած են:

- Ա. Զբօսաշրջիկներուն համար
- Բ. Պարզ ժողովուրդին համար
- Գ. Փարաւոններուն համար

Հանելուկի պատասխանն է «օ» տառը:



Մանկապատանեկան Հորիզոնը կը հովանաւորեն ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային վարչութիւնը եւ Գանատայի շրջանի իր 10 մասնաճիւղերը

Հեռաձայն (514) 332-3757
Email: sylvia@horizonweekly.ca
Խմբագրութիւն՝ Անահիտ Պալեանի
Թիւր պատրաստեց Լիլիթ Ժամկոչեան
Ձեւաղացք՝ Լորի Խաչերեանի